



With funding from
**Austrian
 Development
 Cooperation**



«Միասին հանուն սոցիալական համայնքների - Ամուր տեղական գործընկերություն և կարող ՔՀԿ-ներ ի նպաստ Հայաստանում ներառական սոցիալական պաշտպանության և հաշվետու համայնքների» Ծրագիր

EuropeAid/168333/DD/ACT/AM

ԵՆԹԱԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԻԱՆ

Հայտատուներին և նրանց փորձառությանը առնչվող հարցեր.

1. Արդյո՞ք Ենթադրամաշնորհային ծրագրին հայտատուները կարող են դիմել համընկերության (կոնսորցիումի) ձևաչափով և ոչ թե՛ միանձնյա:

Համաձայն Ենթադրամաշնորհային ծրագրի Ուղեցույցի 2.2 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին հայտատուները պետք է դիմեն միանձնյա, այսինքն՝ առանց գործընկերոջ: Ըստ այդմ, կոնսորցիումով ներկայացվող հայտերը ընդունելի չեն:

2. Արդյո՞ք կազմակերպությունը կարող է դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին, եթե այն բազմաթիվ ծրագրեր է իրականացրել Հայաստանի մարզերում, սակայն գրանցված չէ Հայաստանի հանրապետությունում:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են դիմել միայն այն կազմակերպությունները, որոնք գրանցված են Հայաստանի հանրապետությունում որպես տեղական կազմակերպություն: Ըստ այդմ, միջազգային կազմակերպությունները կամ դրանց մասնաճյուղերը չեն կարող դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին, եթե դրանք ՀՀ-ում չունեն տեղական կազմակերպության գրանցում:

3. Արդյո՞ք նախաձեռնողական խմբերը կամ փորձագիտական խմբերը կարող են դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են դիմել միայն այն կազմակերպությունները, որոնք գրանցված են Հայաստանի հանրապետությունում որպես տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպություն և ունեն իրավաբանական պայմանագրի կողմ լինելու իրավասություն: Ըստ այդմ, նախաձեռնողական խմբերը կամ փորձագիտական խմբերը՝ որպես առանձին միավոր չեն կարող դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին:

4. Արդյո՞ք կազմակերպությունը կարող է դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին, եթե այն գրանցված է և գործում է Երևանում:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են մասնակցել այն բոլոր կազմակերպությունները, որոնք որպես ՔՀԿ իրավաբանական գրանցում ունեն Հայաստանի հանրապետությունում և, որոնց կողմից իրականացված և որպես փորձառություն ներկայացված ծրագրերից առնվազն մեկն իրականացվել է Ծրագրի թիրախ համայնքներից/մարզերից որևէ մեկում (նպատակահարմար է այն մարզում/համայնքում, որի համար Կազմակերպության կողմից ներկայացվելու է հայտ): Ըստ այդմ, Երևանում գրանցված կազմակերպությունը, որը գործունեություն է ծավալել կամ դեռևս ծավալում Ծրագրի թիրախ մարզերում/ համայնքներում, կարող է դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին: Այնուամենայնիվ, մայրաքաղաքից դուրս գտնվող շրջաններում գործող ՔՀԿ-ների մասնակցությունը խրախուսվում է:



With funding from
**Austrian
 Development
 Cooperation**



5. Ի՞նչ նկատի ունեք, Ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն ստելով: Ինչպե՞ս է դա ապացուցվելու:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող Հայտատուն, պետք է վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 2 ծրագրի իրականացման փորձառություն ունենան, որոնցից յուրաքանչյուրի բյուջեն պետք է գերազանցի 6,000 եվրոն և, որոնցից առնվազն մեկն ուղղակիորեն պետք է առնչվի սոցիալական ծառայությունների տրամադրմանը և իրականացված լինի Ծրագրի թիրախ մարզերից/համայնքներից որևէ մեկում:

Ծրագրերի մասին ապացուցելի փորձառությունը պետք է ներկայացնել Ենթադրամաշնորհային Ծրագրի Հայտի Կետ 6.-ում:

6. Արդյո՞ք միայն ՔՀԿ-ները կարող են դիմել միայն Ենթադրամաշնորհային ծրագրին, թե՞ նաև համայնքային կառույցները նույնպես կարող են դիմել:

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, սույն Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են դիմել միայն քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

7. Արդյո՞ք Ծրագրային հայտին կից անհրաժեշտ է ներկայացնել նաև անձնակազմի ինքնակենսագրականները (CV):

Առանձին ինքնակենսագրականների ներկայացում Հայտերի ընդունման տվյալ փուլում չի նախատեսվում: Հայտատուից պահանջվում է անհրաժեշտ տեղեկատվությունը լրացնել Հայտի 3.9 կետում:

8. Հայտի շրջանակներում Հայտատուից պահանջվում է ներկայացնել նաև Գրանցման վկայականը: Եթե Կազմակերպության հիմնադրման պահին տրված Գրանցման վկայականից բացի, նաև առկա է Պետական ռեգիստրի կողմից տրված հավելված տվյալ վկայականում տեղ գտած փոփոխությունների մասին, ապա ո՞ր փաստաթուղթն է անհրաժեշտ ներկայացնել:

Նշված պարագայում, անհրաժեշտ է ներկայացնել և հիմնադրման պահի գրանցման վկայականը, և դրան կից հավելվածը՝ փոփոխությունների մասին:

9. Արդյո՞ք Կազմակերպության կողմից ներկայացվող երկու ծրագրերից յուրաքանչյուրը պետք է ունենա առնվազն 6.000 եվրո արժողություն, թե միայն մեկը բավարար է:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, ներկայացվող առնվազն երկու ծրագրից յուրաքանչյուրը պետք է ունենա 6000 եվրոյին համարժեք կամ այն գերազանցող բյուջե:

10. Արդյո՞ք կազմակերպությունը կարող է սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում որպես փորձառություն ներկայացնել ծրագիրը, որն իրականացրել է որպես համահայտատու:

Եթե կազմակերպությունը, որպես համահայտատու կառավարել է դրամաշնորհի ընդհանուր բյուջեի այն մասնաբաժինը, որը կազմել է ավելին քան 6,000 եվրոն, ապա նա կարող է տվյալ ծրագիրը ներկայացնել որպես փորձառություն:

11. Եթե կազմակերպությունը նորաստեղծ է և դեռևս չունի իր ծրագրերի իրականացման փորձառություն, սակայն կազմակերպության ղեկավարն ունի նման ծրագրերի կառավարման փորձառություն, արդյո՞ք կազմակերպությունը կարող է դիմել սույն Ենթադրամաշնորհային ծրագրին:

Սույն Ենթադրամաշնորհային ծրագրին դիմելու համար, համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, Հայտատուն պետք է՝ որպես տեղական կազմակերպություն ունենա «առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն Հայաստանում»: Հետևաբար, Հայտատուն կազմակերպությունը պետք է լինի, ոչ թե անհատը: Ըստ այդմ, փորձառությունը նույնպես վերաբերում է Կազմակերպությանը և, ոչ՝ անհատին:



With funding from
= Austrian
Development
Cooperation



12. Առավելագույնը քանի՞ հայտ կարող է ներկայացնել մեկ կազմակերպությունը սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Համաձայն Ուղեցույցի 2.2.2 կետի, սույն դրամաշնորհային մրցույթի շրջանակներում մեկ կազմակերպությունը կարող է ներկայացնել մինչև 4 -ը հայտ, սակայն մեկ մարզի համար չի կարող ներկայացնել ավելի քան մեկ հայտ:

13. Առավելագույնը քանի՞ դրամաշնորհի կարող է հավակնել մեկ Հայտատուն:

Համաձայն Ուղեցույցի 2.2.2 կետի, սույն դրամաշնորհային մրցույթի շրջանակներում մեկ Հայտատուն կարող է հավակնել առավելագույնը երկու դրամաշնորհի:



With funding from:
Austrian
Development
Cooperation



Ծրագրի շրջանակին, թույլատրելի ծրագրային գործողություններին և ակնկալվող արդյունքներին վերաբերող հարցեր.

14. Արդյո՞ք ծրագիրը պետք է պարտադիր ունենա սոցիալական ծառայությունների տրամադրման բաղադրիչ:

Սույն Ծրագիրը ուղղակիորեն թիրախավորում է համայնքահեն սոցիալական ծառայությունների ներդրումը և/կամ փորձարկումը կամ բարելավումը և/կամ ընդլայնումը, ինչպես նշված է Ուղեցույցի 2.3.5 կետում: Հետևաբար, Ծրագիրը պետք է ուղղակիորեն վերաբերի համայնքների աղքատ, խոցելի կամ մարզինալացված բնակչությանը սոցիալական ծառայությունների տրամադրմանը:

15. Արդյո՞ք Հայտը պետք է արձագանքի տվյալ համայնքի տեղական սոցիալական պլանով առանձնացված բոլոր ծառայություններին:

Սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ներկայացվող Հայտը կարող է վերաբերել տեղական սոցիալական պլանով առաջարկված ինչպես միայն մեկ ծառայության, այնպես էլ մի քանիսի միաժամանակ, սակայն դա պետք է բովանդակային տեսանկյունից հստակորեն մեկնաբանված և կապակցված լինի: Բացի այդ վերջինը, որևէ առավելություն հայտատուին չի տալիս:

16. Արդյո՞ք տեղական սոցիալական պլանով նախատեսված ծառայությունների տիպերի միջև կան որոշակի առաջնահերթություններ:

Տեղական սոցիալական պլանով նախատեսված բոլոր ծառայությունները համարվում են հավասարաչափ առաջնահերթ:

17. Արդյո՞ք սույն ծրագրի շրջանակներում պարտադիր է ծառայության փորձարկումը կամ ներդրումը:

Սույն Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում ծառայության փորձարկումը կամ ներդրումը կարող է լինել ընդունելի գործողություններից մեկը, սակայն պարտադիր չէ: Ծրագրի շրջանակներում հնարավոր է նաև արդեն իսկ առկա-գործող ծառայության ընդլայնում կամ բարելավում:

18. Արդյո՞ք սույն Ծրագրի ներքո կարող են ֆինանսավորվել այնպիսի ծրագրերը, որոնք ենթադրում են շահառուներին աջակցության փաթեթների տրամադրում:

Սույն ծրագրի շրջանակներում չեն կարող ֆինանսավորվել այն ծրագրերը, որոնք ենթադրում են զուտ հումանիտար օգնության տրամադրում շահառուներին կամ միայն ունեն աջակցության տրամադրման բաղադրիչ: Սա նշանակում է, որ Ծրագրով կարող է նման փաթեթների տրամադրում նախատեսել միայն այն դեպքում, եթե դա ուղղակիորեն բխում է և հստակորեն նկարագրված է Հայտի Ծառայության մեթոդաբանության ներկայացման հատվածում և ուղղակիորեն կապվում է ծառայության այլ բաղադրիչների հետ:

19. Արդյո՞ք ծրագրի շրջանակներում հնարավոր է վերապատրաստումների իրականացում:

Սույն ծրագրի շրջանակներում ընդունելի չեն այն ծրագրերը, որոնք վերաբերում են հիմնականում կամ բացառապես սեմինարների կամ վերապատրաստումների իրականացմանը, սակայն նման բաղադրիչներ ընդհանուր առմամբ առաջարկվող հայտը կարող է ունենալ, եթե դա ուղղակիորեն առնչվում է Ծրագրի այլ հիմնարար բաղադրիչների:

20. Արդյո՞ք սույն Ծրագրի շրջանակներում համագործակցությունը տեղական կառույցների հետ պարտադիր է:

Սույն Դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, միջոլորտային և միջգերատեսչական համագործակցության խթանումը հանդիսանում է առաջարկվող հայտի պարտադիր բաղադրիչ, հետևաբար Հայտատուն պետք է Ծրագիրը նախագծի այնպես, որպեսզի այն ի սկզբանե ներառի համագործակցություն տվյալ համայնքում գործող պետական, համայնքային և ոչ պետական կառույցների հետ:



With funding from
**Austrian
 Development
 Cooperation**



21. Արդյո՞ք ծրագիրը կարող է իրականացվել է մեկ մարզի մի քանի համայնքում:

Համաձայն, Ուղեցույցի մեկ կազմակերպությունը մեկ մարզի համար կարող է ներկայացնել միայն մեկ հայտ, օրինակ Սյունիքի մարզում, կազմակերպությունը պետք է Հայտ ներկայացնի կամ Միսիանի կամ Գորիսի կամ Տաթևի համար: Հետևաբար, ծրագիրը պետք է իրականացվի մեկ կոնկրետ համայնքում: Մինևույն ժամանակ, ծրագիրը կարող է իրականացվել ինչպես համայնքի առանձին բնակավայրերում, այնպես էլ կարող է ներառել ամբողջ համայնքը:

22. Ինչպիսի՞ նվազագույն չափանիշներով պետք է առաջնորդվել առաջարկվող ծառայության մեթոդաբանությունը նկարագրելիս:

Հայտատուն, Հայտը մշակելիս և ծառայությունը նկարագրելիս պետք է ցույց տա, թե Ենթադրամաշնորհային ծրագրի Ուղեցույցի 2.3.4. կետում (էջեր՝ 9-10) նշված նվազագույն չափանիշ-սկզբունքները ինչպե՞ս են ապահովվելու: Սրանք ընդհանրական նվազագույն պայմաններ են, որոնք հավասարապես կիրառելի են բոլոր տիպի սոցիալական ծառայությունների համար:

23. Արդյո՞ք հնարավոր է ներկայացնել Հայտ, որը տվյալ համայնքի կողմից հաստատված տեղական սոցիալական պլանով նախատեսված չէ:

Սույն Ենթադրամաշնորհի շրջանակներում կարող են ֆինանսավորվել միայն ծառայությունների այն տեսակները, որոնք նախատեսված են և հաստատված տվյալ համայնքի տեղական սոցիալական պլանով:



With funding from:
**Austrian
 Development
 Cooperation**



Ծրագրային բյուջեին և ընդունելի ծախսերին վերաբերող հարցեր

24. Արդյո՞ք Հայաստան կարող է պայմանագիր կնքել պետական կամ համայնքային ծառայողի հետ:

Համաձայն Ուղեցույցի 2.5.2 կետի, պետության ներկայացուցիչների կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների աշխատավարձերը համարվում են արգելված ծախսեր: Այնուամենայնիվ, եթե տվյալ անձը կարող է ներգրավվել որպես փորձագետ՝ իր աշխատանքից ազատ (արձակուրդային) ժամերին և այն պայմաններով, որը չի հակասում տեղական օրենսդրությանը:

25. Ուղեցույցում նշված է, որ Ծրագրի շրջանակներում հնարավոր է սարքավորումներ և գրասենյակային պարագաների ձեռքբերում: Արդյո՞ք կա որևէ սահմանափակում, թե որքան կարող են կազմել նման ծախսերը:

Սկզբունքային տեսանկյունից, նման սահմանափակում ծրագրով նախատեսված չէ: Սակայն, ձեռք բերվող սարքավորումները և գրասենյակային պարագաները պետք է ուղղակիորեն կապված լինեն ծրագրի/ծառայության բովանդակության հետ, ինչպես նաև ընդհանուր առմամբ ծրագրի բյուջեն պետք է լինի հավասարակշռված:

26. Արդյո՞ք առկա են որոշակի սահմանափակումներ կապված բյուջեի տողերի հետ, օրինակ աշխատավարձի:

Ծրագրի շրջանակներում բյուջեի տողերին առնչվող միակ սահմանափակումը վերաբերում է «Ծառայությունների կենտրոնների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ» տողին, որը չի կարող կազմել ավելին, քան Ծրագրի ամբողջ բյուջեի 20%:

Բյուջեի մյուս տողերի մասով նման սահմանափակում դրված չէ, սակայն պետք է հստակորեն երևա, թե բյուջեի տողերից յուրաքանչյուրը ինչպես է կապված ընդհանուր առմամբ ծրագրի բովանդակության հետ: Ըստ այդմ, բյուջեն դիտարկվելու է այն տեսանկյունից, թե որքանով են նախատեսված ծախսերը իրատեսական ծրագրային գործողությունների տեսանկյունից և, մասնավորապես, որքանով են դրանք ծախսարդյունավետ:

27. Արդյո՞ք ծրագրում կարող է ներառվել արտաքին միջազգային փորձագետ:

Համաձայն Ուղեցույցի 2.5.1 կետի, միայն տեղական փորձագետներ կարող են ներգրավվել ծրագրում:

28. Արդյո՞ք ենթադրամաշնորհային ծրագրերը ազատվելու են ԱԱՀ-ից:

Այո, սույն ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, մինչ ծրագրերի մեկնարկը, Դոնորը դիմելու է դրանց հարկազատման համար՝ որպես ԵՄ կողմից ֆինանսավորվող դրամաշնորհ:



Ազմինիստրատիվ հարցերին և գնահատման չափանիշներին վերաբերող հարցեր.

29. Եթե մեր կազմակերպությունը ծրագրի շրջանակներում նախատեսում է անմիջական աշխատանք պետական և համայնքային սոցիալական ծառայությունների հետ, օրինակ՝ շահառուների ուղղորդման կամ այլ բաղադրիչների մասով, արդյո՞ք անհրաժեշտ է Ծրագրի փաթեթի հետ միասին ուղարկել Աջակցության նամակ տվյալ կառույցի կողմից:

Խնդրում ենք, Հայտի շրջանակներում միայն նկարագրել նախկին կամ նախատեսվող խորհրդակցությունները կամ համաձայնությունները տվյալ կառույցների հետ: Ներկա փուլում Աջակցության նամակի կամ Համագործակցության հուշագրի ներկայացման անհրաժեշտություն չկա:

30. Ե՞րբ լրացնում ենք Ենթադրամաշնորհային ծրագրի հայտը, արդյո՞ք պետք է պահպանել յուրաքանչյուր վերնագրի/կետի ներքո տրված հուշումները, թե դրանք կարող ենք ջնջել:

Հուշումները ենթակա են ջնջման, Հայտը լրացնելուց հետո: Այնուամենայնիվ, համոզված եղեք, որ յուրաքանչյուր վերնագրի ներքո տրված են բոլոր անհրաժեշտ պատասխանները:

31. Արդյո՞ք կարիք կա Ծրագրի ամփոփ նկարագիրը ներկայացնել և հայերեն, և անգլերեն:

Ծրագրի ամփոփ նկարագիրը պետք է ներկայացնել միայն անգլերեն լեզվով:

32. Արդյո՞ք Ծրագիրը պետք է գրվի անգլերենով, թե միայն Ծրագրի ամփոփ նկարագիրը:

Միայն Ծրագրի ամփոփ նկարագիրն է գրվում անգլերեն լեզվով, իսկ Ծրագրի Հայտի մյուս բոլոր բաղադրիչները գրվում են հայերենով:

33. Դրամաշնորհային ծրագրի հայտի առաջին էջում նշված է «Դրամաշնորհի համար», ի՞նչ է անհրաժեշտ այդտեղ նշել:

Այդտեղ նշում անելու կարիք չկա, դա լրացվում է Դոնորի կողմից: